«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորում ռուսաց լեզվի և գրականության դասերին»

Առարկան՝ Ռուսաց լեզու և գրականություն

Հեղինակ՝ Հասմիկ Սահակյան

Մարզ՝ Շիրակ

Ուսումնական հաստատություն՝ Կապսի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....3

Օտար լեզուների դերը արժեհամակարգի ձևավորման մեջ.....4

Ի՞նչ է արժեքային համակարգը.....6

3.Արժեքային համակարգի ձևավորման օրինակներ օտար լեզուների դասընթացում/մասնավորապես ռուսաց լեզվի./.....8

Հետազոտություն.....10

Եզրակացություն.....15

Գրականության ցանկ.....17

Հավելված.....18

Ներածություն

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝- Աշխատանքիս հիմնական նպատակը ցույց տալ օտար լեզուների, մասնավորապես ռուսաց լեզվի, դերը աշակերտի արժեքային համակարգի ձևավորման գործում: Հանրակրթական պետական նոր չափորոշչի համաձայն բոլոր բնագավառները միտված են աշակերտների մոտ զարգացնել 8 առանձքային կարողունակությունները: Ռ. լեզու և գրականություն առարկան նպաստում է մի քանի կարողունակությունների զարգացմանը, որից առավել առանցքային է համարվում լեզվական գրագիտությունը:

Իմ աշխատանքում բերված են ռուսաց լեզվի և գրականության դասընթացից մի շարք թեմաներ, որտեղ ակնառու երևում են արժեքային համակարգի ձևավորող տարրեր:

Հետազոտական աշխատանքը հիմնված է ինչպես հետազոտողների ուսումնասիրությունների, այնպես էլ իմ կատարած աշխատանքի հիման վրա : Ներկայացրել եմ 2 դասի օրինակներ, որտեղ դասի վերջնարդյունքում նշվում է , թե աշակերտը թեմայի դասավանդման ընթացքում ինչը կկարևորի:

Ուսումնասիրության հիմնական մեթոդ ընտրել եմ **հարցադրումների մեթոդը:** Աշխատանքում առավել ուշադրություն եմ դարձրել **մոտիվացիոն-խթանող** հարցադրումներին:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Օտար լեզուների դերը արժեհամակարգի ձևավորման գործում

Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ:

Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ

իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով:

Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշխատանքի նպատակն է վերջնաարդյունքում ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են

սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու,

քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության

աստիճանը բարձրացնելու, մոտիվացիան խթանելու համար:

Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար:Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն

ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է զբաղեցնում:ՈՒսուցման

արդյունավետության և աշակերտների ներգրավվածության համար դիտարկվել է

հարցադրման մի քանի ռազմավարություններ:Ռուսաց լեզվի դասի մեջ

հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և

բաղկացուցիչ մասն է կազմում:Հարցադրումների կիրառմամաբ կարելի է ստուգել

նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը,ինչպես նաև մեծացնել

աշակերտների ակտիվացումը դասապրոցեսին:

Ստորև ներկայացնում եմ հարցադրումների մի քանի ռազմավարություններ որոնք նպաստում են աշակերտների ակտիվացմանը դասապրոցեսին: Գլխավոր նպատակը այն է, որ սովորողները կարողանան իրար հետ համագործակցելով սովորել,փոխանակել կարծիքներ,քաջալերել միմյանց:

Ի՞նչ է արժեքային համակարգը

Արժեքը, աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են ՝ հավատն ու սերը:

Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը սեփական անձը սիրելու երևույթն է:

Սերն ապրում է, որն ըստ Հեգելի չի հենվում խորհրդածությունների և դատողականության վրա, այլ բխում է զգացմունքից: Սերը խիստ անհատական և անկրկնելի ապրում է:

Ամեն մեկը յուրովի է սիրում: Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման:Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է:

Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է Սոկրատեսից,ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի(որի կրողը նա համարում է ճշմարիտը),գործնականի (բարին),գեղարվեստականի (գեղեցիկը):

Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք են: Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Եթե Արիստոտելն առաջնորդվում էր <<թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>> սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են << թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է>> սկզբունքով: Ավելին, ճիշտ և դասի

նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր

գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների

համար:Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն

ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է զբաղեցնում:Ուսուցման

արդյունավետության և աշակերտների ներգրավվածության համար դիտարկվել է

հարցադրման մի քանի ռազմավարություններ:

Ռուսաց լեզվի դասի մեջ հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում:Հարցադրումների կիրառմամաբ կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը,ինչպես նաև մեծացնել

աշակերտների ակտիվացումը դասապրոցեսին: Ստորև ներկայացնում եմ

հարցադրումների մի քանի ռազմավարություններ որոնք նպաստում են աշակերտների ակտիվացմանը դասապրոցեսին:

Գլխավոր նպատակը այն է, որ սովորողները կարողանան իրար հետ համագործակցելով սովորել,փոխանակել կարծիքներ,քաջալերել միմյանց:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ/մասնավորապես ռուսաց լեզվի/

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես՝ նկատի ունեմ ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել:

Ռուսաց լեզվի անհամրելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող ենք հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռում: Կարելի է, դիցուք, հիշատակել Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների,

անձնազոհության ու հայրենանվիրության բացահայտումներով: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ի դեպ, յուրաքանչյուր ուսուցիչ ունի որոշակի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով է օգնում իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Մեզ համար դա տարիներ ի վեր եղել և մնում է համաշխահարհային գրականության այդ հսկայի՝ Լ. Տոլստոյի վերոնշյալ ստեղծագործությունը: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարություն ություն Սա այն մոտեցումն է, երբ ուսուցիչը հարցն ուղղում է ամբողջ դասարանին: Ամենայն հավանականությամբ, սա ամենատարածված մեթոդներից մեկն է, որի շրջանակում տրվող հարցերը հիմնականում նպատակ ունեն պարզելու նյութի յուրացման մակարդակը կամ պարզել, թե որքանով են աշակերտներն ընկալել ուսուցանվող նյութը: Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ այս հարցերին պատասխանում են հիմնականում դասարանի բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները, մյուսները պարզապես լինում են լսողի դերում: Ավելին, հաստատվեց նաև Գալլի այն տեսակետը, որ որքան ավելի շատ հարցադրումներ են հնչում, այնքան ավելի պակաս աշակերտներ են մասնակցում դասին: Ճիշտ հարցադրման դեպքում այն կարող է հիմնովին փոխել նախնական պատկերը:

Հետազոտություն

Աշխատանքի նպատակն է ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար: Ուսուցման արդյունավետության և սովորողների ներգրավածության բարձրացման համար քննարկվել են հարցադրման մի քանի ռազմավարություններ:

Հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում: Հարցադրումների կիրառմամբ ոչ միայն կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլ նաև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը, որն էլ իր հերթին ազդում է ուսուցման որակի և արդյունավետության վրա: Ավելին, ճիշտ ձևով կազմված հարցերը, որոնք տրվում են հոգեբանորեն ապահով միջավայրում, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, ինչպես նաև բարձրացնում են աշակերտների ինքնավստահությունը:Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել զրույցը՝ կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին:

Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ կոգնիտիվ վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև:

Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավածությունը բարձրացնելու համար: Անընդհատ պատասխանելով հարցերին աշակերտների փոխարեն, ուսուցիչը անուղղակիորեն «ասում է», որ նորմալ է, որ նրանք չեն պատասխանում հարցերին, քանի որ ուսուցիչը ի վերջո ինքը կպատասխանի: Արդյունքում աշակերտների սովորելու և դասին մասնակցելու գործընթացը մասնակիորեն դադարեցվում է: Իրականացված հետազոտությունների շրջանակում պարզվել է, որ պատասխանին ավելի երկար սպասելով՝ գրանցում են հետևյալ հաջողությունները.

- Սովորողների պատասխաններն ընդարձակվում են:
- Ամբողջական նախադասություններ և վստահության ավելացում:
- Հայեցողական մտածողության դրսևորում:
- Ավելանում են սովորողի հարցերը և աշակերտների ակտիվությունը:

Ուսուցիչները վերանայում են սովորողներից ունեցած ակնկալիքները:

- Անցում ուսուցչակենտրոն ուսուցումից սովորող-սովորող վարքի դրսևորումներին և ընդլայնում են հարցերի շրջանակը: Այսպիսով՝ ուսուցչի սպասման ժամանակի ավելացումն ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որը նպաստավոր է վերլուծակա և քննադատական մտածողության զարգացման գործում:

Հետազոտվող դաս 1

Ես իմ փորձարարական դասը անցկացրել եմ Շիրակի մարզի Կապսի դպրոցի 6-րդ դասարանում ՝ Հայաստան և Ռուսաստան թեմայով:

Թեման բավականին մատչել էր ու հասկանալի, և քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չեր ներգրավվում դասապրոցեսին՝ թեման հաղորդեցի հարցադրման մեթոդով: Քանի որ հարցադրման միջոցով կարելի է աշակերտներին ներգրավել դասապրոցեսի մեջ:

Թեմայի հաղորդումից հետո հարցերի միջոցով պարզեցի <Ինչքանով էր ընկալելի նոր թեման աշակերտների համար: Հարցադրման միջոցով ստուգեցի աշակերտների ձեռք բերած գիտելիքները թեմայի վերաբերյալ :

ԿԱՊԿՈՒ աշակերտին տվեցի հանձնարարություն ՝ դրոշների մեջից առանձնացնել Հայաստանի և Ռուսաստանի դրոշները:

Աշակերտները պատասխանեցին և ընթանրացրին իրենց տեսակետները արժեքային համակարգի վերաբերյալ: Ամփոփելուց հետո սկսեցինք աշխատել գրատախտակի մոտ փակցրած նկարների միջոցով ներկայացնելով երկու երկրների մշակութային արժեքները: Դասը քննարկելուց հետո գրատախտակին գրվեցին մի քանի արժեքներ արտահայտող բառեր և միջին առաջադիմությամբ երկու աշակերտ սկսեցին աշխատել գրատախտակի մոտ նշելով թե երկու երկրներում վերոնշյալ արժեքներից որն են ավելի կարևորում:

Բարձր առաջադիմությամբ աշակերտները պատասխանեցին դասագրքում տրված հարցերին թեմայի վերաբերյալ, իսյ ցածր առաջադիմությամբ աշակերտները՝ 4-5 հաճախ գործածվող բառեր դասի թեմայից՝ թարգմանեցին: Պետք է նշեմ, որ աշխատանքի ընթացքում իմ ուշադրության կենտրոնում մնացել էին հատկապես ցածր առաջադիմությամբ աշակերտները:

Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով:

Հետազոտվող դաս 2

Հաջորդ փորձարարական դասը վերցրել եմ « Հայաստանի հրաշալի վայրերը » թեման:

Թեմայի համար սահմանված նպատակները՝ անցած դասերից ստացած գիտելիքների հիման վրա արժևորել Հայաստանի տեսարժան վայրերն ու շրջանները, ամրապնդել յուրացրած թեման գործնական աշխատանքի միջոցով:

Թեման բավականին մատչել էր ու հասկանալի, և քանի որ այս դասարանում սովորողների մի մասը չեր ներգրավվում դասապրոցեսին՝ թեման հաղորդեցի հարցադրման մեթոդով: Քանի որ հարցադրման միջոցով կարելի է աշակերտների ներգրավել դասապրոցեսի մեջ: Իսկ ԿԱՊԿ ունեցող աշակերտին հանձնարարեցի նկարներից գտնել Երևանը և Արարատ սարը պատկերող նկարները և անվանել դրանք:

Մտագրոհ մեթոդի միջոցով ամրապնդեցի նախորդ թեմաները: Դասարանում կատարվում է թեստային աշխատանք որին հատկացված է 15 րոպե: Թեստի միջոցով կատարեցի գիտելիքի ստուգում նախորդ թեմաների վերաբերյալ: Այնուհետև հանձնարարեցի գործնական աշխատանք ՝ աշակերտների ընտրությամբ գրել ռեֆերատներ Հայաստանի որևէ շրջանի մասին:

Թեմայի հաղորդումից հետո հարցերի միջոցով պարզեցի Ինչքանով էր ընկալելի նոր թեման աշակերտների համար: Հարցադրման միջոցով ստուգեցի աշակերտների ձեռք բերած գիտելիքները է թեմայի վերաբերյալ :

Աշակերտները պատասխանեցին և ընթանրացրին իրենց տեսակետները

արժեքային համակարգի վերաբերյալ: Ամփոփելուց հետո սկսեցինք աշխատել գրատախտակի մոտ փակցրած նկարների միջոցով ներկայացնելով երկու երկրների

մշակութային արժեքները: Դասը քննարկելուց հետո գրատախտակին գրվեցին մի քանի արժեքներ արտահայտող բառեր և միջին առաջադիմությամբ երկու աշակերտ սկսեցին աշխատել գրատախտակի մոտ նշելով թե երկու երկրներում վերոնշյալ արժեքներից որն են ավելի կարևորում:

Այնուհետև արեցինք գործնական աշխատանք՝ < Հայաստանի տեսարժան վայրերից մեկը> նկարագրել ըստ ցանկության: Աշխատանքն ավարտելուց հետո միասին քննարկեցինք:

Աշակերտները կարողանացան ինքնուրույն նկարագրել <Քաղաքը պատշգամբից>, նրա շրջանները և տեսարժան վայրերը, արդեն ծանոթ և հասկանալի թեման շարադրելով կատարել գործնական աշխատանքը:

Դասն ավարտվեց տնային աշխատանքի հանձնարարումով:

Եզրակացություն

Այս դասարանում , որտեղ ես կատարեցի իմ աշխատանքները, եկա այն եզրակացության, որ լավ ու ստացված դասի գրավականներից մեկը դասի սկզբում որպես խթան օգտագործված մոտիվացիոն հարցադրումներից է կախված:

Դասերը, որոնք ես կիրառեցի երկուսն էլ ունեին ինչպես իմացական նպատակներ, այնպես էլ արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող նպատակներ: Առաջինում երկու երկրների մասին տեղեկություններ, ու դրանց մշակութային արժեքների վերաբերյալ իմացություն, իսկ երկրորդ թեմայով՝ Հայաստանի տեսարժան վայրեր , զարգացնում ենք լ գեղագիտական ճաշակը, խթանում հայրենասիրությունը, հայրենի երկրի տեսարժան վայրերի իմացությունը ,նպաստում աշխարհընկալմանը:

Խմբերի նկարագրության ժամանակ նշեցի, որ դասարանում ունեմ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, որի համար ունեի թեմայի հետ կապված նպատակ ՝ թեմատիկ նկարների ռուսերեն անվանումներ. նկարներում պատկերված էին երկրի խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան, Արարատ սար, Սևանա լիճ:

Փորձարարական դասերը ստացված ու հաջողված եմ համարում քանի որ աշակերտները մեծ հետաքրքրությամբ մասնակցեցին ու յուրացրին իրենց դասերը: Հաջողություններից ուզում եմ առանձնացնել նաև ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ աշխատանքը դասին՝ աշակերտը նույնպես ունեցավ մասնակցություն, կարողացավ ուսուցչի օգնությամբ տրված նկարները տարբերել և Հայաստանի վերաբերյալ հայերեն լեզվով արռանց կաշկանդվելու արտասանել <Ես իմ անուշ Հայաստանի> բանաստեղծությունից մի հատված:

5.Գրականության ցանկ

1. **Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. ,,Մանկավարժություն,, Մանկավարժ 2005**
2. **Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր՝ <<Անգլերեն լեզու>> 2007**
3. **Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ:**
4. **Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ., 317 էջ:**
5. **Մուդրիիկ Ա.Վ.-Դպրոցականի անձը և նրա դաստիրակությունը կոլեկտիվում -Երևան 1986**
6. **Մանկավարժություն ամսագիր, թիվ 7. 2011թ. Գայանե Մկրտչյան էջ 44-46**
7. **Я. Корчак, Избранные педагогические произведения, М., 1979, 458 с.**

Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝Հասմիկ Սահակյան

Առարկա՝	**ռուսերեն**	**Ամսաթիվ**			**Դասարան**	6
Թեմա՝	ՀԱՅԱՍՏԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆ					
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան***					
Դասի նպատակը՝	**Իմանալ-երկու երկրների մասին տեղեկություններ** **Հասկանալ-երկների բարեկամության սկզբունքները** **Իմանալ-Մշակութային առանձնահատկությունները,** **Սովորողները գաղափար կազմեն տվյալ թեմայի հասկացության մասին: Սովորեն և հասկանան նոր բառեր արտահայտություններ, կատարեն վերլուծություններ, սերմանել արժևորել հայրենիքի հանդեպ սեր և հարգանք:**					
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ					

Վերջնարդյունքները	**ԿԿարողանա՝** **տալ տեղեկություններ երկու երկրների մասին** **մշակութային առանձնահատկությունները տարբերել:** **հասկանալ նոր թեմայում ամփոփված բառերը արտահայտությունները և ամրապնդել դրանք:**			
Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***	**Հարցադրումներ**	**Կիրառվողմեթոդ(ներ)**
5րոպե-սկիզբ **10րոպե-ընթացք**	**Բացել դասագրքերը պատրաստվել նոր դասին:** **Ներկայացնել տնային աշխատանքները** **Պատասխանել հարցերին** **թույլ ունակություններ ունեցող աշակերտները կատարում է թեմայի վերաբերյալ տրված առաջադրանքները**	**Ողջունել դասարանին, ն/բ:** **Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը** **Տալ հարցադրումներ աշակերտներին ներգրավել դասապրոցեսին** **Տալ ուղղորդող հարցադրումներ**	*Ներկայացրել դրոշների գույները բացատրել յուրաքանչյուր գույնի նշանակությունը:*	***Հարցադրումների մեթոդ***

15рոպե **12рոպե** **3рոպե-ավարտ**	**Աշակերտները կատարում է թեմայի վերաբերյալ դասի վերջում տրված պարապ առաջադրանքները:**	**Կատարել խմբային աշխատանք (բաժանվում է երեք խմբի) միջոցով դասի համապատասխան բաժինները սովորել յուրացնել դասարանում:** **Նոր թեմա հաղորդել բանավոր հետադարձ կապ տրամադրել անհասկանալի հատվածները բացատրել** *(Նոր թեման՝ Հայաստանի հրաշալի վայրերը>)*	*Գտնել տվյալ զինանշանները հց Հայաստանի Ռուսաստանի զինանշանները:* *Նոր թեման՝ Հայաստանի հրաշալի վայրերը>* *Թվարկել Հայաստանի հրաշալի վայրերից ս քանիսը:* *Ձեզ համար Հայաստանի Հրաշալի վայրերիվ որ է յուրահատուկ և ինչո՞ւ:*	***Խմբային*** ***Համագործակցային աշխատանք*** ***Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու, աշխարհագրություն***

	Լուռ լսել դասը կատարել նշումներ հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատան դասագրքի հետ	**Գնահատում տնային աշխատանք հանձնարարում**		***յուն. արվեստ մշակույթ)***
Տնային աշխատանք	***Ինքնուրույն ընթերցել , թարգմանել և պատասխանել դասի վերջ հարցերին:***			

Փորձարարական դասի պլան 2

Ուսուցիչ՝ Հասմիկ Սահակյան

Առարկա՝	**ռուսերեն**	**Ամսաթիվ**			**Դասարան**	6
Թեմա՝	« Հայաստանի հրաշալի վայրերը »					
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան***					
Դասի նպատակը՝	**Անցած դասերից ստացած գիտելիքների հիման վրա արժևորե Հայաստանի տեսարժան վայրերն ու շրջանները, ամրապնդե յուրացրած թեման գործնական աշխատանքի միջոցով:**					
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցում տեղի ունեցավ					

Վերջնարդյունքները	Աշակերտները ը կկարողանան ինքնուրույն նկարագրե Հայաստանը, նրա շրջանները և տեսարժան վայրերը, արդե ծանոթ և հասկանալի թեման շարադրելով կատարել գործնակա աշխատանքը			
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն *Աշակերտներ*	Ուսումնական գործունեություն *Ուսուցիչ*	Հարցադրումներ	Կիրառվողմեթոդ(ներ)
5րոպե-սկիզբ 10րոպե-ընթացք	Բացել դասագրքերը պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները Պատասխանել հարցերին	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Մտագրոհ մեթոդ միջոցով		*Հարցադրումներ մեթոդ*

	Թեստի միջոցո կատարել գիտելիք ստուգում նախոր թեմաների վերաբերյալ:	**ամրապնդել նախորդ թեմաները**	***Ինչպիսի՞ քաղաք Երևանը:***	***Խմբային աշխատանք***
15րոպե	***Լուռ լսել դասը կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատան դասագրքի հետ***	**Նոր թեմա հաղորդել բանավոր հետադարձ կապ տրամադրել, անհասկանալի հատվածները բացատրել:** *(Նոր թեման՝ Քաղաքը պատշգամբից>)*	***Ինչպիսի՞ն է տեսնու առավոտյ ն Երևան պատշգամ ից հայտն գրող Մարիետա Շահինյան :***	***Համագործակցա ին աշխատանք***
12րոպե	***Գրել Հայաստան որևէ շրջան վերաբերյալ գործնական աշխատանք:***		***Ասածեք թ ինչպե՞ս փոխվել***	

Յրոպե-ավ ոտ	***Աշխատանքների ներկայացում***	**Հանձնարարել գործնական աշխատանք աշակերտների ընտրությամբ գրե ռեֆերատներ Հայաստանի որև շրջանի մասին** **Գնահատում տնային աշխատանքի հանձնարարում**	***քաղաք Երևանը:***	
Տնային աշխատան ք	***Գործնական աշխատանք***			